



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “06”. 02. 2015 թ. (արձ. № 9)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թարվերդյան “09”. 02. 2015 թ.
--	---

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ
ՌԵՍՈՒՐՍԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2015

**ԴԱՍԱՎԱՆՈՒՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԲԱՆ

Համալսարանի խնդիրներից է դասավանդման և ուսումնառության ռեսուրսների ընտրությունը և արդիականացումը: Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների ընտրությունը և արդիականացումը կարևորագույն դեր է խաղում դասավանդման և ուսումնառության գործընթացներում:

Ընտրությունը նշանակում է առկա ռեսուրսներից ընտրել այն նյութերը, որոնք առավելապես կապահովեն ուսանողի ակտիվությունը և ուսումնառության վերջնարդյունքներին հասնելը:

Արդիականացումը նշանակում է առկա դասավանդման և ուսումնառության նյութերի և ռեսուրսների թարմացումը, նորացումը, կատարելագործումը՝ ուսումնառության ընթացքը և ուսումնառության վերջնարդյունքները ապահովելու համար:

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացումը ենթադրում է դասավանդման գործընթացը և ուսանողի ուսումնառությունը երաշխավորող ռեսուրսների վերանայումը և թարմացումը՝ բարձրագույն կրթության համակարգում ռեսուրսների վրա դրվող պահանջին համապատասխան:

Բարձրակի և արդիական դասավանդման և ուսումնառության ռեսուրսները կազմում են ակադեմիական ծրագրերի պլանավորման և իրականացման անբաժանելի մասը:

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացման համար անհրաժեշտ է արդյունավետ կառավարել այդ ռեսուրսները, բացահայտել խնդիրները, կայացնել համապատասխան որոշումներ՝ ուղղված դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացմանը:

Որակյալ դասավանդման և ուսումնառության նյութերը և ռեսուրսները ապահովում են արդյունավետ դասավանդում և ուսումնառություն:

Սույն քաղաքականությունը ուղղված է՝

- Դասավանդման և ուսումնառության նյութերի և ռեսուրսների արդիականացմանը,
- Դասավանդողին անհրաժեշտ ժամանակակից ռեսուրսներով ապահովմանը,
- Ուսումնառողին որակյալ կրթության ապահովմանը՝ ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու համար:

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԵՐԸ

Սույն քաղաքականությունը կիրառվում է հետևյալ ոլորտների նկատմամբ՝

- Կրթական գործընթաց,
- Դասավանդում,
- Ռեսուրսային բազայի ապահովում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսներ

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսներին են դասվում համակարգչային տեխնիկան, կապի միջոցները, օժանդակ սարքերը, online ռեսուրսները, ժամանակակից ծրագրային միջոցները, մուլտիմեդիալ նյութերը և այլն:

Ուսումնառության ռեսուրսների մեջ են մտնում նաև գրադարանային ռեսուրսները՝ գրքերը, ուսումնական ձեռնարկները և այլ ռեսուրսներ:

Դասավանդման և ուսումնառության նյութերը և ռեսուրսները պետք է ընտրված և հասանելի լինեն ուսանողին և դասախոսին, և երաշխավորեն՝

- Ակադեմիական ծրագրերի կազմման ամբողջականությունը,
- Ակադեմիական ծրագրերի իրականացումը,
- Դասավանդման գործընթացի որակը,
- Ուսանողի ուսումնառությունը,
- Ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերումը:

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների ըտրությունը և արդիականացումը

Դասավանդման ռեսուրսների արդիականացման անհրաժեշտությունը առաջանում է դասավանդման որակի բարձրացման և դասավանդման մոտեցումների արդիակա-

նացման պահանջից և հանդիսանում է ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու միջոց:

Ուսումնառության և դասավանդման որակը բնութագրվում է դասավանդման որակով և դասավանդման ռեսուրսների լիարժեք կիրառելիության մակարդակով:

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացումը անհրաժեշտ է՝

- Ուսումնառողների ակադեմիական զարգացումը ապահովելու համար,
- Դասավանդման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպման համար,
- Ուսանողներին տրվող նյութերի ամբողջականությունը և արդիականացումը ապահովելու համար:

Դասավանդման և ուսումնառության նյութերի ընտրությունը և արդիականացումը *կարևոր դեր է խաղում* ուսանողի ուսումնառության մեջ:

Դասավանդման և ուսումնառության նյութերի ընտրությունը և արդիականացումը *նպաստում է* ուսանողի գիտելիքների և կարողությունների ընդլայնմանը և ուսումնառության վերջնարդյունքների ապահովմանը:

Դասավանդման և ուսումնառության նյութերի ընտրությունը և արդիականացումը պարտադիր պայման է դասավանդվող առարկայի համար ռեսուրսային բազայի ապահովման համար:

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների *որակի ապահովումը* սահմանվում է ելնելով ռեսուրսների վրա դրվող ակադեմիական նորմերից:

Էլեկտրոնային դասավանդման և ուսումնառության նյութերը՝ այդ թվում դասախոսության նյութերը, սլայդերը, կայքում տեղադրվող այլ նյութերը պետք է լավագույն փորձ հանդիսանան ուսանողի ուսումնառության համար:

Դասախոսի կողմից պատրաստված դասավանդման նյութերը պետք է հասանելի լինեն ուսանողին՝ ելնելով ուսանողին դասավանդման նյութերով ապահովման պահանջից:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների ընտրությունը և արդիականացումը պետք է երաշխավորի կրթական գործընթացի արդյունավետությունը և ուսանողի ուսումնառության վերջնարդյունքները:

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների ընտրության և արդիականացման քաղաքականության իրականացման պատասխանատուներն են՝

- Ռեկտորը,
- Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորը,
- Ամբիոնի վարիչները,
- ՏՏ կենտրոնի տնօրենը,
- Գրադարանի վարիչը և այլ օժանդակող պատասխանատուներ:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Սույն քաղաքականությունը ենթակա է վերանայման <Փաստաթղթերի կառավարում> ընթացակարգի համաձայն:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Նպատակ

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացման նպատակն է՝

- Բարձրացնել և կատարելագործել կրթական գործընթացի որակը,
- Բարձրացնել ուսանողի ուսումնառության որակը,
- Բարձրացնել դասավանդման որակը,
- Բարձրացնել ուսանողի կրթական վերջնարդյունքներին հասնելու որակը:

Խնդիրներ

- Բարձրացնել ուսանողների պատրաստվածության մակարդակը,
- Ապահովել դասավանդման գործընթացի ժամանակակից տեխնիկական միջոցներով,
- Ապահովել ուսանողներին արդիական ուսումնա-մեթոդական բազայով,
- Ապահովել դասավանդման գործընթացի արդյունավետությունը,
- Ապահովել ուսանողի ուսումնառության գործընթացի արդյունավետությունը,
- Պարբերաբար վերանայել և թարմացնել ուսումնառության և դասավանդման նյութերը:

Կիրառվող ռեսուրսներ

Դասավանդման և ուսումնառության ժամանակակից ռեսուրսները բաժանվում են հետևյալ տեսակների՝

- *Տպագիր նյութեր* (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասախոսության նյութեր և այլն):
- *Էլեկտրոնային կրթական ռեսուրսներ* (մուլտիմեդիալ դասագրքեր, ցանցային կրթական ռեսուրսներ, էլեկտրոնային ուսումնամեթոդական ռեսուրսներ և այլն):
- *Աուդիովիզուալ նյութեր* (սլայդեր, սլայդ-ֆիլմեր, ուսումնական ֆիլմեր և այլն):
- *Տեխնիկական և ծրագրային միջոցներ*:
- *Ցուցադրական նյութեր* (մակետներ, մոդելներ):

- *Հաբորատոր սարքեր* (մասնագիտական սարքեր՝ լաբորատոր պարապմունքների համար):


Ընթացակարգի իրականացում

1. **Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների առկա վիճակի գնահատում:** Ռեսուրսային բազայի գնահատման համար Վերանայման հանձնաժողովի կազմում: Ռեսուրսների արդիականությունը ստուգելու համար գնահատման չափանիշների մշակում:
2. **Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների առկա բազայի ուսումնասիրում և գրանցում:** Վերանայման հանձնաժողովի կողմից ռեսուրսային բազայի ուսումնասիրում, գրառումներ կատարում, արձանագրությունների կազմում:
3. **Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդյունավետության գնահատում շահակիցների շրջանում:** Ուսանողների և դասախոսների շրջանակում հարցումների կազմակերպում՝ դասավանդման և ուսումնառության ռեսուրսների և նյութերի արդյունավետության մակարդակի վերաբերյալ:
4. **Ռեսուրսների արդիական լինելու վերլուծություն:** Վերանայման հանձնաժողովի կողմից նախնական հաշվետվությունների կազմում: Հարցումների անցկացված արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում:
5. **Հաշվետվողականության ապահովում:** Հաշվետվությունների ներկայացում և քննարկում Համալսարանի ռեկտորատում և գիտական խորհրդի նիստին՝ համապատաստախ որոշումների կայացման համար:
6. **Արդիականացման հնարավորությունների ուսումնասիրություն:** Արդիական ռեսուրսների ընտրության չափանիշների մշակում ըստ մասնագիտությունների: Դասավանդման գործընթացում նոր տեխնոլոգիաների բացահայտում: Արդիականացման ուղիների որոնում:
7. **Արդիականացում:** Կոնկրետ միջոցառումների ձեռնարկում ռեսուրսների արդիականացման ուղղությամբ:
8. **Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների շահագործում:**

Պատասխանատվություն

	Ռեսուրս	Պատասխանատու
1.	Դասագրքերի արդիականացում	Գրադարանի վարիչ
2.	Դասավանդման էլեկտրոնային ռեսուրսների արդիականացում	SS և ԻԾ կենտրոն
3.	Դասախոսության նյութերի արդիականացում	Ամբիոն, դասավանդող
4.	Էլեկտրոնային նյութերի արդիականացում (սլայդեր, նյութի էլեկտրոնային ներկայացում)	Ամբիոն, դասավանդող
5.	Լաբորատոր մասնագիտացված ռեսուրսային բազայի արդիականացում	Ռեկտոր Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր
6.	Համակարգչային բազայի արդիականացում	Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր SS և ԻԾ կենտրոն
7.	Մուլտիմեդիալ միջոցների արդիականացում	Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր SS և ԻԾ կենտրոն
8.	Կոմունիկացիոն ռեսուրսների արդիականացում	Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր SS և ԻԾ կենտրոն
9.	Մասնագիտացված ծրագրային միջոցների արդիականացում	SS և ԻԾ կենտրոն

Ընթացակարգի ներկայացումը սխեմատիկ տեսքով



ՄՈՒՏՔ	ԳՈՐԾԸՆԹԱՑ	ԵԼՔ
-------	-----------	-----

